ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/6520/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

16 օգոստոսի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Արմինե Բաղդասարյան Արսենի» Ա/Ձ-ն ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Արմինե Բաղդասարյան Արսենի» Ա/Ձ-ի ներկայացուցիչը 2024թ. օգոստոսի 9-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի՝ թիվ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/89» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. օգոստոսի 12-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. օգոստոսի 13-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Արմինե Բաղդասարյան Արսենի» Ա/Ձ-ն ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/6520/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. սեպտեմբերի 27-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am